


ՅԱՆՁՆԱՐԱՐ ԱՐԴԵՆՏԱԳԵՏ ԱՐ

Posted on August 14, 2016 by Keghart




Category: [Opinions](#)



Մովսես Ծիրանի, Մոնթրեալ, 13 Օգոստոս 2016

Մասնագիտութեամբ բժիշկ, սակայն եւութեամբ արուեստագետի խառնուածքի տեր, քանդակագործ՝ Մկրտիչ Տարագճեանի մէկ յատկանշական ցուցահանդէսի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Յուլիս 28ի երեկոյեան, Mont-Royal քաղաքապետարանի Reginald Dawson հանրային գրադարանի արուեստի ցուցադրահին մէջ, ներկայութեամբ՝ Mont-Royal տարածաշրջանի Գանատական խորհրդարանի անդամ՝ Anthony Housefatherի:




Ցուցադրութեան դրուած են շուրջ քառասուն ստեղծագործութիւններ, որոնք ընդհանուր գաղափար մը կուտան մեզի անոր ստեղծագործական անցած ուղիի մասին:

Մովսես Ծիրանի, Մոնթրեալ, 13 Օգոստոս 2016

Մասնագիտութեամբ բժիշկ, սակայն եւութեամբ արուեստագետի խառնուածքի տեր, քանդակագործ՝ Մկրտիչ Տարագճեանի մէկ յատկանշական ցուցահանդէսի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Յուլիս 28ի երեկոյեան, Mont-Royal քաղաքապետարանի Reginald Dawson հանրային գրադարանի

արուեստի ցուցադրահին մէջ, Ներկայութեամբ՝ Mont-Royal տարածաշրջանի Գանատական խորհրդարանի անդամ՝ Anthony Housefatherի:



Ցուցադրութեան դրուած են շուրջ քառասուն ստեղծագործութիւններ, որոնք ընդհանուր գաղափար մը կուտան մեզի անոր ստեղծագործական անցած ուղիի մասին:

Տարագճեան թեւ գերհրապաշտ մըն է սակայն այս մէկը չի խանգարեր զինք, որպէսզի իրագործէ նաև իրապաշտական բնոյթի դիմաքանդակներ, որոնք կը դրսեւորեն անոր ծեփակերտելու հմտութիւնն ու կատարողական մակարդակը: Իսկ անոր յղացքները (որոնք երեսունէ աւելի են) գրաւականն են իր հօօր երեւակայութեան և տաղանդին: Անոր գլխաւոր կերպարը Մարդն է՝ Գլխագիր մարդը, տարօրինակ, երբեմն նոյնիսկ՝ արտակերպուն միջավայրի մէջ, ուր տեղի կ'ունենայ գոյատեւման պայքարն ու մարդու մարդկայնացման տազնապահար գործընթացը: Ան կ'աշխատի մարդու մարմնի մասերու հանման սզգբունքով, որուն նախակարապետներէն են Օկիւստ Ռոտէնն ու Արշիլ Կորքին:

Մեր օրերուն բազմաթիւ են այն կերպարուստագետները, որոնք ազատօրէն կը վարուին մարդու մարմնի հետ, սակայն քիչ են յաջողածները: Այդ քիչերէն կարելի է համարել Տարագճեանը ևս,

որոն «Crossing the Wall» ստեղծագործութիւնը այս առումով լաւագոյն օրինակը կրնայ հանդիսանալ: Ան այն յանձնառու արուստակէտներէն է, որոնց ստեղծագործութիւններէն իւրաքանչիւրը պատգամ մը կը պարունակէ իր մէջ: Այս պատճառով ալ անոր արուեստը առաւելագոյնս բացայայտելու համար կարիքը կը զգացուի համապատասխան վելուծումներու և մեկնաբանութեան:

Ցուցահանդէսը պիտի շարունակուի մինչև Օգոստոս 25

Հասցէ Reginald Dawson Library, 1967 Graham Boulevard, Mont Royal

